ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԲԱՄԲԱԿ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

633.3

ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ է 1951 թ.

ԱՌՎՈՒՅՏԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ա 7/2 դրամ

ԳՅՈՒՂՇՐԱՏ 1936 ԵՐԵՎԱՆ

633.3
Պ-84

[Պոպով], Գ.
Ստուգիչների ճշգրտ-
Բյան ագրոցցմուտքեր.

29/V	31/V	588

Սրբագրիչ Ա. Այվազյան
Գլավլիտի լիազոր Ս—488
Հրատ. № 322, պատվ. № 225, տիրաժ 1500
Հանձնված է արտադրության 1936 թվի ապրիլի 4-ին
Տարբերված է տպագրելու 1936 թվի ապրիլի 10-ին

Գյուղկրտսի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

Ա. ԽՈՏԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎՈՂ ԱՌՎՈՒՅՏԸ

1. ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԱՌՎՈՒՅՏԻ ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

1. Առվույտը ցանել ցանքաշրջանառության հողերում

Առվույտը ցանել առաջին հերթին ցանքաշրջանառության տակ դրվելիք հողերում, վորպեսզի նրա ընդարձակումը և նվազումն աստիճանաբար նպաստի բամբակի և մյուս կուլտուրաների բերքի բարձրացմանը և անասնապահության զարգացմանը։

2. Առվույտի մաքուր ցանք

Առվույտն առանց ծածկող կուլտուրայի ցանելու դեպքում հողն անհրաժեշտ է նախապատրաստել այնպես, ինչպես ագրոկանոններով նախատեսված է կատարել բամբակի ցանքի համար։

3. Առվույտի յենթացանք կատարելը

Առվույտը վորևե ծածկող կուլտուրայի (ցորեն, գարի) տակ ցանելիս հողը ծածկող կուլ-

տուրայի համար պիտի լինի վաղ ցել կամ ուշ աշնանավար։ Վերջինները ծածկովի կուլտուրայով ցանելու նախորյակին պիտի նախապատրաստել այնպես, որ նրա վրա հետագայում ցան-

Նկ. 1. Սովորական ավույտ

վելիք ավույտի զարգացման համար անհրաժեշտ բոլոր նպաստավոր պայմանները լինեն (կրկնահերկված, փոցխված, կոշտերը մանրացված, մարդերի միջի տարածությունը հարթված)։

2. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Ի՞նչ պարարտանյութերով պարարտացնել

Առվույտի ցանքը խոտի համար մշակելիս պարարտացնել գոմաղբով, մոխրով, առվի տիղմով և հանքային պարարտանյութերով։

Պարարտանյութի քանակը

Մեկ հեկտար ցանքին տալ 75 կգ ֆոսֆոր, (սուպերֆոսֆատ 14%-անի՝ 535 կգ, 18,9%-ի՝ 400 կգ), կամ 40—50 սայլ մոխիր, կամ 80—100 սայլ առվի տիղմ, կամ 20 տոննա գոմաղբ (80 սայլ)։

Պարարտանյութի տեսակը յեվ քանակը սերմացու առվույտի համար

Սերմացու առվույտն անհրաժեշտ է պարարտացնել գլխավորապես ֆոսֆորով՝ մեկ հեկտարին տալով 75 կգ (14%-անի՝ 535 կգ, 18,9%-անի՝ 400 կգ)։

Պարարտացման ժամկետները

1. Ծածկող կուլտուրայի տակ առվույտ ցանելիս պարարտանյութը ծածկող կուլտուրայի տակ մտցնել աշնանացանի դեպքում՝ աշնանավարից առաջ և գարնանացանի դեպքում՝ գարնանավարից առաջ։ Իսկ հին առվույտները պա-

բարտացնել գարնանը կանաչելուց առաջ՝ մարտի 15-ից մինչև ապրիլի 10-ը, իսկ բարեհաջող ձըմռան յեղանակներին՝ նաև ձմեռը։

2. Հին առվույտի պարարտացումը հնձից հետո կատարելիս քիչ արդյունք է տալիս։

Պարարտացման տեխնիկան

1. Պարարտանյութը հողի մեջ համաչափ բաշխելու համար անհրաժեշտ է շաղ տալ այդ նպատակի համար արտադրված շաղացան մեքենաներով։

2. Պարարտանյութ շաղ տվող մեքենաներ չլինելու դեպքում պարարտանյութը ձեռքով շաղ տալ։

3. Պարարտանյութը հողի մեջ համաչափ մտցնելու համար անհրաժեշտ է նախապես 1 հեկտարը բաժանել 20 հավասար վանդակի և ապա յուրաքանչյուր վանդակ պարարտացնել առանձին։ Շաղ տալուց հետո հողը 1—2 յերես փոցխել՝ դիսկով կամ դիզգագ փոցխով։

4. Պարարտանյութը համաչափ բաշխելու համար անհրաժեշտ է պարարտանյութի քանակը՝ 400 կգ 18,9%-անի սուպերֆոսֆատը՝ բաժանել վանդակների թվի վրա և բաժանարարում ստացած քանակով պարարտացնել յուրաքանչյուր վանդակը։

5. Վորպեսզի պարարտանյութը դիսկով փոց-

խելու ժամանակ դիսկի ափսեները հին առվույտները թափակալման հանդույցից ցածր չկարեն և դրա հետևանքով ցանքը չնոսրանա, անհրաժեշտ է դիսկի ափսեներն իրար զուգահեռ դասավորել։

3. ՍԵՐՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Սերմի գտումը

Սերմացուն նախքան ցանելը պիտի զտել՝ նրա միջից վտանգավոր մոլախոտերը (գելուկ,



Նկ. 2. Առվույտը տեսակավորող մեքենա—«Գուսկուտա»

կապույտ սարեփուկ, յեզան լեզու) և հատկապես գելուկը հեռացնելու համար։

2. Զտման տեխնիկան

Առվույտի սերմացուն ցանելուց առաջ պիտի զտել գելուկ զտող «կուսկուտա» № 3 մեքենայով։

Հիշյալ մեքենայի բացակայության դեպքում ագրոնոմի հսկողությամբ և թույլտվությամբ պետք է զտել ձեռքի մանր մաղերով ու տեփուրներով։

3. Սերմացուի կոնդիցիան

Զտված սերմացուն պիտի ունենա 92% մաքրություն (100 հատ սերմի մեջ 92%-ն առվույտ, մնացած 8%-ն այլ սերմեր) և 70% ծլունակություն։ Սերմացուի մաքրությունը և ծլունակությունն ստուգելու համար զտելուց հետո յենթարկել լաբորատոր անալիզի։ Մեկ կգ առվույտի սերմի մեջ 10 հատ կուսկուտայի սերմից ավելի չպիտի լինի։

4. ՅԱՆԳ

1. Ցանքի մեքենայացումը

Առվույտն առանց ծածկող կուլտուրայի ցանելիս պիտի ցանել հատկապես առվույտ ցանող

մեքենաներով և կամ այդ նպատակի համար հարմարեցված հացահատիկների շարքացան մեքենաներով. ցանքը կատարել բոլոր արորիկներով (սոշնիկներով)։

2. Սերմացու առվույտի ցանքի մեխանիզացում

Սերմացու առվույտի ցանքը կատարվում է 2 ձևով.

ա) ժապավենաձև—շարքացան մեքենան ցանում է մեջ առ մեջ հեռացրած սերմատար խողովակներով՝ շարքը շարքից 20—30 սմ հեռավորությամբ.

բ) լայնաշար ձևով—շարքացան մեքենայի սերմնատար խողովակները ցանում են իրարից 55—60 սմ հեռավորության վրա։

3. Ձեռքով ցանք

Շարքացան մեքենաներ չլինելու դեպքում ցանքը պետք է կատարել ձեռքով։ Այս դեպքում պիտի ցանել առվի յերկարությամբ և լայնությամբ (խաչաձև), վորպեսզի չցանված տարածություններ չմնան։ Սերմը հողի մեջ հավասարաչափ բաշխելու համար սերմի քանակի յեռակի չափով ավելացնել մանր ավազ կամ հող և ապա ցանել։ Սերմը ցանելուց հետո հողի մեջ մտցը-



Նկ. 3. Ավոտյուղի բույսի զարգացումը և սերմացուի բերքը ցանքի տեղանքի կատակցությամբ

նել զիգզագ փոցխով և կամ չրփուի խրձերով հողը փոցխելով։

4. Ցենքացանք

Առվույտը ծածկող կուլտուրայի տակ ցանելիս նպատակահարմար է ցանքը կատարել ձեռքով, վորովհետև ծածկող կուլտուրան թփակալած է լինում, հողն ամրացած և անհարթ, վորի հետևանքով հնարավոր չէ մեքենայով ցանել։

5. Ցանքի ժամկետները

Առվույտը ցանել մարտի 15-ից մինչև ապրիլի 10-ը, նայած գարնան վաղ կամ ուշ սկսվելուն՝ ցանքի ժամկետը կապելով ծածկող կուլտուրայի թփակալած մասսայի բարձրությանն հետ (թփակալած մասսան 15 սմ-ից բարձր չպիտի լինի)։

6. Ցանքի նորման

Խոտի համար առվույտը ցանել 1 հեկտարին 16—20 կգ։ Ցանքը սերմացուի նպատակով կատարելու դեպքում ցանել 14—16 կգ սերմ։ Ցերկու դեպքում էլ սերմի քանակը կախված է հողի և կլիմայի խոնավությունից, հողի կարծրությունից, վաղ կամ ուշ ցանելուց։

7. Սերմի վարակումը նիտրագինով

Առվույտի սերմացուն նախքան ցանելը պիտի վարակել նիտրագինով, այսինքն ոդի ազոտը կապող բակտերիաների կուլտուրայով։ Վարակման լենթակա չե առվույտի ամբողջ սերմացուն։ Մեկ հեկտարի համար անհրաժեշտ սերմը (16-ից 20 կիլո) վարակել մեկ տուփ նիտրագինով։

8. Նիտրագինով վարակելու տեխնիկան

ա) Ցանքի նախորդ օրը տուփի միջի բակտերիաներով վարակած հողը լցնել 5-ից 10 լիտր լերեսը քաշած, յեփած և սառեցրած կաթի մեջ, լավ խառնել և մեկ գիշեր պահել տաք տեղ։

բ) Հետևյալ օրը, նայած թե ինչ բույսի սերմե ցանվելու և ինչ քանակություն ունի սերմերը, ըստ այնմ ել այնքան ջուր ավելացնել, որ բավարար լինի սերմերը թրջելու համար։ Ջուրը լցնելուց հետո խառնել։

գ) Սերմերը լցնել մի որևե մաքուր շորի կամ տախտակի վրա և այդ խառնուրդով թրջել ու այնքան խառնել, որ բոլոր սերմերը թրջվեն դրանով (յեթե հեղուկը շատ ե յեղել և սերմերը կպչում են, ապա խառնել մի քիչ չոր հող)։

դ) Սերմերը թրջելուց հետո անմիջապես ցանել։

ե) Յեթե շարքացան ե կատարվում, ապա



Նկ. 4. Առվույտի ամառային բույսը

որվա բոլոր ժամերին եվ կարելի յե ցանել։ Իսկ շաղացանի դեպքում պետք է խուսափել շոգ ժամանակ ցանելուց։ կամ պետք է ցանել ամպամած օրերին, կամ կեսօրից հետո և անմիջապես փոցխել՝ սերմերը հողի մեջ մտցնելու համար։

գ) ցանքը կատարել անպայման խոնավ հողում։

5. ԱՌՎՈՒՅՏԻ ԽՆԱՄՔԸ

1. Հին առվույտների փոցխելը

Հին առվույտների բերքատվությունը բարձրացնելու համար, պարտադիր կարգով, բոլոր ցանքերը գարնանը՝ մինչև խոտի կանաչելը, և աշնանը՝ վերջին հնձից հետո, փոցխել դիսկավոր կամ զիգզագ փոցխով։ Դիսկումը տրակտորով կատարելիս դիսկել 1—2 յերես, լծկան անասունի միջոցով փոցխելիս կամ դիսկելիս՝ 2—3 յերես։

Եթե պարարտացման հետևանքով փոցխում կատարվել է, նորից փոցխելն ավելորդ է։

2. Չրելու ժամկետը յեվ նորման

Ցանքի առաջին տարին առվույտի Չրելը հարմարեցնել հացաբույսերի պահանջին։ Մինչև հացաբույսերի հունձը, իսկ հետագայում հացա-

բույսերի հնձից հետո, առվույտը պետք է ջրել 2 անգամից վոչ պակաս։ Առաջին անգամ պետք է ջրել հացաբույսերի հնձից անմիջապես հետո, իսկ 2-րդ անգամ՝ 10—15 որ անց։ Յերբ առվույտը ջրվում է 2 անգամից ավելի, վերջին ջուրը տալ սեպտեմբերի 20-ից վոչ ուշ։ Առվույտի 2-րդ տարվա և ավելի հին ցանքերը պետք է ջրել 8—12 անգամ (յուրաքանչյուր 12—15 որը մեկ անգամ, իսկ իբրև պարտադիր կանոն՝ ջրել ամեն քաղից հետո։

3. Պայքար մոլախոտերի դեմ

Առվույտի ամենավտանգավոր մոլախոտը, գելուկն (դաղձ) է։ Գելուկը (կուսկուտան) և մյուս մոլախոտերը վոչնչացնելու համար առվույտի մաքուր և հին ցանքերը 1—2 անգամ պետք է քաղհանել մինչև մոլախոտերի սերմնակալելը։ Քաղհանված մոլախոտերը դաշտից դուրս պիտի տանել և լեթե սերմնակալած են, վրան նավթ լցնել և այրել։

4. Պայքար վնասատուների դեմ

Առվույտի տերևակերի (ֆիտոնոմուս) թրթուրի դեմ պետք է պայքարել. հին առվույտները գարնանը՝ մինչև բույսի կանաչելը և աշնանը՝ վերջին հնձից հետո, 1—2 անգամ դիսկով կամ դիգզագ փոցխով փոցխել։ Առաջին հունձը 12—15

որ շուտ ավարտել։ Առվույտի տերևակերի մասսան կարելի է վոչնչացնել նաև մեխանիկորեն ջարդելու միջոցով։ Այդ արվում է առաջին հնձի բերքը վերցնելուց անմիջապես հետո՝ դաշտը տափանելու կամ չռփելու միջոցով։ Քիմիական միջոցներով կարելի է պայքարել մկնդեղային թթվի կալցիումով և նիկոտին սուլֆատով (հրահանգը կուղարկվի առանձին)։

6. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

1. Հունձերի թիվը (քանակը)

Ագրոկանոնների լրիվ կիրառման միջոցով հին առվույտներից կատարել 4 հունձ։

2. Հնձելու ժամկետները

Առվույտը խոտի համար հնձել 50%-ով ծաղկած ժամանակ։ Ծաղկելուց առաջ և լրիվ ծաղկելուց հետո քաղված խոտի մեջ պիտանի սնունդանյութերի քանակն զգալի չափով պակասում է։

3. Հնձելու ձևերը

Հունձը կատարել տրակտորի և ձիու խոտհունձ մեքենաներով։ Մեքենաներ չլինելու դեպքում պետք է հնձել գերանդիով։

4. Չորացնելը, փոխադրելը յեվ պահպանելը

Հնձելուց հետո առվույտի մասսան 4—5 ժամ պետք է չորացնել, ապա թափուլել (վալիկներ կազմել) և, նայած յեղանակին, 1—2 որ թափուլած մասսան չորացնել և վաղ առավոտյան զով յեղանակին կամ գիշերը խորոմել։ Առվույտի հընձած մասսան անձրևի և արևի տակ յերկար թողնելուց պետք է խուսափել։ Յերկու դեպքում էլ խոտը կորցնում է իր սննդանյութերի արժեքավոր մասը։

Անձրևից, արևից, հրդեհից, անասուններից խոտը պաշտպանելու համար առվույտը պետք է դիզել գոմերից հեռու՝ ցանկապատերի մեջ կամ կուրքերի վրա։

5. Դեզերի ձևը յեվ պաշտպանության միջոցները

Վորպեսզի մթնոլորտային տեղումների հետևանքով ջուրը և խոնավությունը դեզերի մեջ չթափանցի, խոտը պետք է դիզել այնպես, վոր նա ունենա վերևում սրածայր ձև (ձկան մեջքի ձև)։ Դեզերի շուրջը պետք է փորել առուներ՝ անձրևաջրերը և պատահական ջրերը հեռացնելու համար։ Դեզերը հրդեհից պաշտպանելու նպատակով յուրաքանչյուր 4 դեզի համար նրանց կենտրոնում փորել քառակուսի ձևով ջրի փոսեր, վորոնք միշտ ջրով լցված պիտի լինեն և պահել հրդեհաշեջ բալոններ։

1885 6 6 9
Ա 27411

Բ. ՍԵՐՄԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎՈՂ ԱՌՎՈՒՅՏԻ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐԸ

1. ՍԵՐՄԱՑՈՒ ԱՌՎՈՒՅՏԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Վորպես սերմացու անհրաժեշտ է առանձնացնել՝

1. Համեմատաբար առվույտի ավելի նոսր ցանքերը, վորոնք սովորաբար քիչ խոտ են տալիս, սակայն, մեծ քանակությամբ սերմապտուղներ կտալով, շատ սերմ են տալիս։

2. Այն ցանքերը, վորոնք բոլորովին չեն վարակված կամ չնչին չափով են վարակված գելուկով-դաղձով (կուսկուտայով), վորովհետև կուսկուտայի սերմը առվույտի սերմից մեծ դրժվարությամբ է անջատվում և ընդհանրապես իջեցնում է խոտի և սերմի վորակը։

3. Գլխավորապես 2-րդ և 3-րդ տարվա առվույտի ցանքերը, վորովհետև այդ ցանքերը՝ 1-ին և հետագա տարիների ցանքերի հետ համեմատած՝ 20-25%-ով ավելի սերմ են տալիս։ 2-րդ և 3-րդ տարվա ցանքեր չլինելու և կամ քիչ լինելու դեպքում, վորպես սերմացու կարելի է վերցնել 1-ին և 4-րդ տարվա ցանքերը։

2. ՎՈՐ ՀՈՒՆՁԸ ԹՈՂՆԵԼ ՍԵՐՄԻ ՀԱՄԱՐ

Յեթե առվույտի դաշտերը վարակված չեն առվույտի տերևակերով (Ֆիտոնոմուս), լավ է վորպես սերմացու թողնել առաջին հունձը, վորովհետև 1-ին հունձը խոնավության, ոդի և հողի ջերմաստիճանների տեսակետից, հետագա հունձերի հետ համեմատած, ավելի նպաստավոր պայմաններում է գտնվում։

Բայց վորովհետև մեր պայմաններում առվույտի առաջին հունձը մշտապես տուժում է տերևակերից, ուստի վորպես սերմացու թողնել 2-րդ հունձը։

3. ՍԵՐՄԱՑՈՒ ՑԱՆՔԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Ա) Միջշարքային տարածությունների փխրեցումը կամ վարելը

Սերմացու առվույտի տարածությունը՝ լայնաշարք ցանված լինելու դեպքում՝ անհրաժեշտ է առաջին և յերկրորդ հնձի տևողության ընթացքում պարբերաբար միջշարքային տարածությունները կուլտիվատորով կամ գութանով փլբրեցնել և մոլախոտերը վոչնչացնել։

Բ) Սերմացու առվույտի վոռոգումը

Առվույտի սերմ արտադրելու գործում ամենապատասխանատու աշխատանքը վոռոգումն է։

Առվույտը՝ շատ ջրելու դեպքում, ի վնաս սերմացու որդանների, զարգացնում է առատ մասսա (խոտ), վորի հեռանքով պակաս սերմ է ստացվում։

Նկ. 5. Առվույտ
1—թուփը, 2—ցողունի մասը, 3—սերմի ցին հուպեր

Հողի մեջ պակաս խոնավություն լինելու դեպքում սերմնապատիճները թափվում են։

Սերմացու առվույտը պետք է ջրել այն հաշվով, որ բույսի լրիվ ծաղկման շրջանում հողի խոնավությունը սուբ կերպով չբարձրանա։

Հողի խոնավությունը բույսի աճեցողության սկզբից մինչև նրա ծաղկելու սկիզբը մաքսիմալ աստիճանի պիտի լինի։ Ծաղկելու մոմենտից սկսած անհրաժեշտ է, որ հողն աստիճանաբար չորանա, սակայն սերմերի կազմակերպման և զարգացման շրջանում բույսը պիտի ջրի պակասություն չզգա և դրա հետևանքով փուչ սերմեր չստացվեն։

4. ՍԵՐՄԱՑՈՒ ԱՌՎՈՒՅՏԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

1. Սերմացու առվույտը պետք է քաղել այն ժամանակ, երբ սերմնապատիճների 75%-ն արդեն գորշ գույն է ստանում՝ հատիկները կարծրանում և դեղնում են։

2. Բերքի կորուստը պակասեցնելու համար, հնձելուց 4-5 որ առաջ, սերմացուի դաշտը պիտի վառոդել, որ ցողունները և պնտիճները փափկեն և բույսը հեշտությամբ քաղվի։

3. Քաղը պիտի կատարել վաղ առավոտից մինչև շոգն սկսվելը և յերեկոյան զովին, որպեսզի սերմնապատիճները չորանալու հետևանքով չկոտրատվին և չթափվեն հնձող գործիքի հարվածներից։

4. Սերմացու առվույտը պիտի քաղել գերանդիով կամ մանգաղով։ Հնձելուց հետո առանց ուշացնելու անհրաժեշտ է քաղված մասսան անմիջապես խուրձ կապել։

Զորացած առվույտը խուրձ կապելիս սերմնապատիճները ջարդվում և թափվում են, ուստի խուրձը պիտի կապել քաղված մասսայի խոնավ ժամանակ։

5. Հնձված առվույտն առաջին իսկ հնարավորության դեպքում գիշերը կամ գով ժամանակ փոխադրել կալսելու վայրը։

6. Վորպեսզի փոխադրության ժամանակ բերքի կորուստը քիչ լինի, անհրաժեշտ է մինչև բարձումը (ավտո, ֆուրգոն, սայլ), փռել բրեզենտ կամ վորևե այլ կտոր։

5. ԲԵՐՔԻ ԿԱԼՍՈՒՄԸ

1. Կալսումը կատարել շոգ որերին և որվա շոգ ժամերին, վորը նպաստում է պատիճների դյուրությամբ փշրվելուն և նրանց միջից սերմի ազատվելուն։

2. Վոչ մի դեպքում չի թույլատրվում սերմացու առվույտի կալսումը ձգձգել մինչև ուշ աշուն։ Սերմացու մասսան կալսելու վայրը փոխադրելուց և չորացնելուց հետո անմիջապես պիտի կալսել։

3. Սերմացու առվույտի կալսելու համար դերադասել հատկապես այդ նպատակի համար պատրաստված, և հացահատիկների սովորական կալսիչները (Սերպ ի մոլոտ, Լանց), վերջիններս հարմարեցնելով առվույտը կալսելուն։

4. Սերմացուն քիչ լինելու և կալսող մեքենաներ չլինելու դեպքում պիտի կալսել անասունի միջոցով (չալթուկի նման)։

6. ՍԵՐՄԻ ՋՏՈՒՄԸ ՅԵՎ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

1. Կալսելուց հետո, վորպեսզի չջարդված սերմնապատիճների միջից սերմն անջատելը հնարավոր լինի, անհրաժեշտ է կալսված մասսան անցկացնել «կլեվերատյորկա» կոչվող տրորող մեքենայի միջով։

2. Առվույտի սերմի (կլեվերատյորկա) տրորիչից դուրս յեկած մասսան պետք է քամհարել՝ սերմը զատելու համար։

3. Քամհարելուց ստացված սերմացուն պետք է զտել հատուկ զտող մեքենաներով («կուսկուտա» № 3), վորը զտելուն զուգընթաց սերմը տեսակավորում է և նրա միջից առանձացնում, մաքրում է վտանգավոր մոլախոտերը և առաջին հերթին կուսկուտայի սերմը։

ԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0037217

(35)
286
АГР
А 2741

Пров.

Наркомзем СВРА—Хлопковое управление

АГРОУКАЗАНИЯ ПО КУЛЬТУРЕ ЛЮЦЕРНЫ

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЕРИВАНЬ

(2401)